

ԲԱԺՆՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ	
20 Թիսի կամար	
Վ. Կանա	Քր. 1.50
Վ. Կանային դուրս	2
Արտատպահան	2.50

ԿԱՏԱԿ

Գրութիւնք եւ չին գրութիւնք :
Կամակ գրամ Կայն գրել հե-
տեւեալ հասցէին :
Վ. ԱՐՁՈՒԹԻՒՆ «ԿԱՏԱԿ» Ի
Վ. Կանա (Պուրիսիա) :

ՄԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

ԿԻ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹ ԿԻՆԴՇԱՐԹԻ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Администрация на епископского

«ГЛАДІВ»

ВАРНА (България).

Administration du journal

«GADAG»

VARNA. (Bulgarie).

Համար 7 1/2 Ստանդարտ

ԼԵՌԱՆ ՄԱՐԴԸ

Դեռ յամառողներ կան :

«Կատակ»ի մէջ թէ հանրադրութեամբ և թէ մասնաւոր դրութեամբ յայտնուած կարծիքներն, կենդանի ապացոյցներ էին, որ Հոյ ժողովուրդը ի՞նչ աստիճանի պէտք կ'ըզայ ազգային մարզը միութեան մը, թէ հոյ ժողովուրդը ի՞նչ աստիճան համակրութեամբ պըռնեց «Կատակ»ի մէջ բացատրուած այն գաղափարներն, որը մեծ միւլթարութիւն է մեզ համար, անանկով որ ժողովուրդը ինքն ալ սկսած է զգալ իւր ցուերը. ապիկայ առաջնաւոր յայտնի նշան մ'է և մեր կողմանէ ալ ոչ նուազ շարհակուլութեան արժանի :

Կան նաեւ կարգ մը անձինք, օրոնք կը պարծին թէ միայն իրենք յեղափոխականներ են և թէ ժողովուրդը կոյր զկուրայն միայն իրենց ըսածին ու գրածին հաւատարմով տալու են առատ առատ գրամներ, որ գործածեն ըստ հաճոյս. այդ կարգի անձանց քով ժողովուրդը նշտակութիւն չունի, նա պարզապէս խողովակ մ'է և հասարակաց կարծիք ըստածն ալ ընդ ծնծղոյի ճոյն իր համարէ որ կը զորանջէ. ապիկայ մենք այնպէս չենք ըմբռներ և համալուած ենք որ առանց ժողովուրդի ոչինչ կարելի է

ընել : Միքանի անձինք, ինչպէս են այդ կարծեցեալ յեղափոխականները, կրնան ժողովուրդեան միւլթարութեան օգտուիլ, բայց նա ալ շատ չկրնար տեսիլ և վերջապէս կուզայ որ մը ուր իրենց գիտ. կը վար կ'իյնայ ու կը խախտուակուին. այդ օրը արդէն եկած հաւած է, եթէ տակաւին կը գտնուին միախառններ, անոնք ալ պիտի սթափին ու շուտով պիտի զանազանեն յորենք գարիէն :

Դրօշակեանք ժողովուրդեան բաւուն պաշտանջմանց և «Կատակ»ի կործանողուն մէջ ազգամ առաւարտութեան գողահար, մեր Գահիրէի թղթակցին պրածին պէս ուզած են մտահոյ անջատեալ Հնչակեաններուն, ազաչելով որ այլ եւս թուողիկ ու անթուղիկով իրարու գէմ չելնեն, որպէսցի ժողովուրդեան միաւորութիւնը յսանդարի ու երկուստէք եկամաւի աղբիւրներն չը ցամախին, իսկ այդ հրաւիրեալ անձինք որ աւելի մաքուր միութեան համակրողներ են Դրօշակեանի աղուէտոյին ն ը կատակերգութեան վրայ այնքան համարում ցոյց կուտան որքան որ կ'արժէ :

Ըսինք և գարծեալ կ'ըսենք, մեր ընելիք յեղափոխութիւնը գործողական որդոյոց «աչք թուր» կամ «եէսիր ալմաճ» խաղը չէ, այլ մասնաւոր երկրի մը ինքնօրէն տէրը գառնալու ինդիր, որն որ ձեռք բերելու համար պէտք է

արտաքին ու ներքին հանգամանքներէն հասկնալու իմաստութիւն և առնուազն 30,000 անկեղծ հայրենասէր կռուողներու և անոնց պարագայից օգտելու չափ գէթ մի տարուան պաշար և վերջապէս բառին բուն նշանակութեամբ 1,000,000 սակոյ պէտքութիւնը, զոր չը ճանչնալու չափ ալ ագէտ կամ կոյր ըլլալու չէ: Այս պիտի մի կարեւոր դռմար աք, ոչ ոք կը վստահի անգոյն Դրօշակի և անպատշաճ չնչակին, լինին միացեալ, ըլլան անմիացեալ:

Ժողովրդեան պահանջած միութիւնը, ինչպէս քանիցս մատնանել ըրին և «կատակոն» ալ արձագանք տուաւ, ազգին, Ժողովրդին և նոյն իսկ օտարներու առջև վարի և հռչակ ունեցող յայտնի գէմքերու հսկողութեան ու գծիթրօլին տակ կազմուած միութիւնն է. որպէսզի վրտահօտութիւն ներշնչէ ամենուն, հարուստին թէ աղքատին, և եթէ հարկ լինի ու օգտակար տեսնուի, կարող լինի նաև յանուն ապագայ հայկական վերակազմեալ կառավարութեան նոյն իսկ փոխառութիւններ ընել, ինչպէս օրինակները չեն պակսիր մեզի բողոքակից ազգերուն մէջ:

Յաւալի է սակայն տեսնել որ այս յայտնուած ճշմարտութեանց առջև, կը դառնաին միամիտ յափշտակեալներ որոնք սոսկեղօժ սուտերու կուտակութեամբ խաբուած կը յամառին դեռ մնալ և անանիլ երեւակայութեանց մէջ:

Յ. ՉԱՔԵՐԵԱՆ.

ՓՈՔՐԻԿ ՆԱՄԱԿՆԵՐ

Ը

Մեր երկրէ հռչակաւոր, համաշխարհային անուն վաստակած կուտակցութիւնները հայ Ժողովրդին առին Եւրոպական սոցիալիստ յեղափոխականների ծրագիրը ներք թարգմանութիւններ: «Կառավարի

ներկայ ծառալ չի ներում» այժմ նոյա՝ մէջ եղած զոնազանութեանց վերայ կանգ առնել միայն այսքան կ'ասեմ՝ երկուսի հիմքն էլ բանւորական հարցն է և ճիշդ այդպիսի կուտակցութիւններ կան Եւրոպայում:

Մի բոլոր ընդունինք, որ այդ բառ առ բառ թարգմանուած ծրագիրները համապատասխան էին մեր երկրի պահանջներին, տեսնենք մեր կեդրոն և բարոներ ինչպէս գործ դրին այդ ծրագիրները:

Ընդունինք, որ Հայաստանում կային ինչպէս Եւրոպայում երկու դասակարգ գեր՝ բուրժուազեան և պրօլիարեան կախը այս երկու դասակարգելի մէջն էր: Որպէսզի հարցը առելի պարզ լինի վերջինքը Հայաստանի մի որ և իցէ անկին, օրինակ Տարօն:

Տարօնի Ժողովուրդը ըստ մեր գործօն յեղափոխականների երկու դասակարգերի է բաժանուած և կախը նոյա մէջն է: Ի հարկէ կառավարութիւնը ինչպէս Եւրոպայում, միշտ բուրժուայի կողմն է:


Տեսականապէս մեր ծրագիրների մէջ ազգութիւնների զոնազանութիւն չկայ: Հայ, Տաճիկ և Գիւրա բուրժուազեան մէկ են. իսկ նոյն ազգերին պատկանող քանւորներ մէկ են: Ճշմարիտ է լամ ասածս այնպէս չէ՝ պարոնայք կեդրոն և բարօներ: Այդպէս էին Մարխ, Լյաւալ, Էնգելս որոնց կազմած ծրագիրներն էք դուք թարգմանել և այդպէս են ասում՝ այժմ կենդանի մեծ և փոքր սոցիալիստներ:

Դէ սկսենք գործել Հայ Ժողովուրդ դու մոռացիր որ սկսած էք լաճի տաճիկի մինչև փաշան, հօտաղ քրտից մինչև էլ-աղաօին և շէյխ քեզ սպաննում են, քո հարսներն ու աղջիկներ փախցնում եկեղեցիներդ պղծում, ունեցածդ առա

նում (այս վերջին շատ լաւ են անում, որովհետեւ դու ըստ մեր ծրագիրներին ոչինչ տեղեկանութիւն պէտք է չունենաս. այդպէս են Եւրոպական բանուորներ), այդ բոլոր մտածցի՛ր և միացի՛ր տաճիկ քիւրտ ժողովրդի հետ: Այդպէս են հրամայում մեր ծրագիրները: Այդ ոչինչ, եթէ տաճիկ ու քիւրտ չեն ուզում միանալ և քեզ կոտորում են, որովհետեւ դու գիտաւոր ունայն ես, այդ ոչինչ մեր մեծեր այդ աչքի տառջ չեն ունեցել, որովհետեւ նոյա թարգմանած ծրագիրներ կազմուած երկիրներում տաճիկ ու քիւրտ չը կան, ի՞նչ անելին մեր կեդրոն ու բիւրոն, խօ՛ իրենց գլխից չէին ստեղծեր: Մարքս տաել է որ այժմ աղագլխիկներին հարց չը կայ, այլ կայ բանուորների հարց: Ի՞նչ կուզես, այս հերիք չէ՞ Սկսենք դործել: Ի՞նչպէս: Եւրոպայում կորելի է ժողովներ անել, ճառեր խօսել, բան-թող անել առաջ, այդպիսի ցոյցերով իրենց բողբոյսը յայտնել ներկայ տիրակալի կառգերի դէմ: Բայց Հայաստանում Տաճիկ չի թողնում ոչ ժողովներ անել եւ ոչ ճառեր խօսել Տ ժամնայ աշխատանքին իրաւունք ստահանջել և կամ մայիսի մէկ տօնելու նըշանակութիւն բացատրել, իսկ բան-թող անելու մասին տաճիկն ու քիւրտ հոգս էին տանում առանց մեր սօցիալիստներէ քորոզներին, նորա քչում տանում էին հայ գիւղացու եզն ու գոմեշ, կապն ու ոչխար և հայ գիւղացին ձեռներ ծալած, նստած «պաղ թանրի» վերայ բան-թող էր անում: Բայց ինչ որ էլ լինի, ցոյցեր եւ պէտք, այդպիսին պահանջում Եւրոպական ծրագիրները: Եւ մերոնք դասն ցոյցեր ընելու ձեռներ Փիշեցին Պուլկարիայի Հայդուկներին և ուստու կան 70նական թուականների դերօ՞ւ իտաներին: Կըլումպոս Ամերիկան դը-

տաւ՝ կեցցեն Հայդուկներ և ահաբեկիչներ . . . և սկսեցին ցոյցերէ այն կոտորակերդութեանը, որը վերջացաւ Հայ ժողովրդի համար այնքան սարսափելի ողբերգութեամբ . . .

1.10



«Բիւզանդիոն»ի Յուլիս 29 թիւին մէջ կը կարգանք հետեւեալը, զոր նոյնութեամբ հրատարակելէ վերջ, կը հրատարակենք «Էն-տէքանտանա»ի այս մասին Բանաստեղծ մարգարէ մը անուն խոքաբերով յօդուածը:

«Կրէտէի մէջ Սիւրիարաոս անուն գիւղացի մը՝ 50 տարեկան՝ որ լատական ուղեւորութիւններ կատարած է, անցեալ տարի գուշակած էր Կրէտէի ապստամբութիւնը, թուրքերէնէնական պատերազմը, օսմանեան բանակին յաղթութիւնն, բռնով որ օսմ. զինուորք մինչեւ Աթէնքի դռաները պիտի հասնին եւլն»:

ԲԱՆԱՍՏԱՆԴՆԻ ՄԱՐԿԱՐԷՆ ՄԸ

Սիւրիարաոս անունմը 50 տարեկան Կրէտացի մը, երկար տարիներ ճամբորդելէ եւ շատ երկիրներ այցելելէ վերջ, Կրէտէ կը հասնի ու կ'երթայ Բէթիօ, ուրտեղ հաստաւ ու ափսոսի մտադրութեամբ ձկնորսութեան արձեւատով կը պարագի. երբ վերջին տարին Կրէտացիներու ներկայացուցիչը մեծ տէրութեանց հիւպատոսներուն հետ կը բանակցէր, Սիւրիարաոս կ'ըսէր հանդարտութեամբ:

«Յիս ամէնը անօգուտ պիտի ըլլայ. ձմեռուան մէջ նոր ապստամբութիւն մը պիտի ունենանք. Յունական բանակ մը պիտի մտնայ ի Կրէտէ, բայց առանց բան մը ստանալու ձեռնառնայն պիտի մեկնի անկէ:

Եւրոպան մեզ պիտի պաշարէ. Թուրքերը եւ Յունաստանի միջեւ պատերազմ մը պիտի ծագի եւ այս պատերազմին մէջ Յունաստան պիտի յաղթուի. Թուրքերը պիտի արշաւեն Յունական հողը. զինադադար մը պիտի կընքուի, սակայն թշնամութիւնը նորէն պիտի սկսին. Այս անգամ Թուրքերը պիտի յառաջանան մինչեւ Աթէնք, բայց չպիտի կրնան

գրուել զայն, այլ քաղաքին պարիսպներուն ներքեւ մեծ ճակատամարտ մը տեղի պիտի ունենայ եւ որուն մէջ թագաւորին զաւակներէն մէկը պիտի սպաննուի, եւ ի վերջոյ ալ Թուրքերը յաղթուելով Հելլենական հողէն իսպառ պիտի վանտուին :

Մի օր, առաւօտանց կանուխ, Եւրոպական նաւատորմիդը Կրէտական ջրերէն պիտի հեռանայ. պատերազմը, սովը եւ համաճարանչ հիւանդութիւնք պիտի աւերեն կղզին, եւ մեծ արիւնշայտութիւններէ ետքը, Թուրքերը վերջ ի վերջոյ անկէ ալ պիտի վաքնուին: Այս Յունա-թրքական պատերազմը պատճառ պիտի ըլլայ Ռուսերուն Կ. Պոլսոյ տիրելուն: Բայց այս մեծ գէպքը միջոյն տեղի պիտի ունենայ Աւստրո-Ռուս պատերազմէ մը ետքը, որուն հետեւանքը պիտի լինի Աւստրիոյ քայքայումն. այն պահին

Ռուսերը Կ. Պոլսէն հանելու համար եւրոպական տէրութեանց միջեւ համաձայնութիւն մը պիտի գոյանայ, հաւաքաբար դէմ պիտի ելնեն Ռուսիոյ, եւ այս աղէտալի պատերազմէն ետքն է որ պիտի սկսի Թուրքիոյ բաժանումը: Յունաստան եւ Կրէտէ մեծ տէրութեան մը թիւարկութեան ներքեւ պիտի գրուին, իրեն մայրաքաղաք ժնննալով Կ. Պոլսը. բայց այս տէրութիւնը պիտի ունենայ Յունական հանգամանք մը, որովհետեւ «Բալէօօսի»ներու սերունդէն մէկը պիտի ըլլայ Բիւզանդիոնի գահուն վրայ բարձրացողը: Սիլիկարոօ կը յաւելու թէ՛ Եւրոպիոյ քարտէսին այս յեղաշրջումը 1899 թուականին վերջերը արդէն կատարուած եւ վերջապա՞ դարձ մը եղած պիտի ըլլայ»:

Թարգմ. Կնուէրանտանսէն



«Կատակ» այսօր կը հրատարակէ իւր 20 ռպ. թիւը եւ զազրելով տեղի կուտայ «Տաւրոս»ի, որին նկատմամբ խօսած ենք արդէն այս թիւթի սիւնակներուն մէջ:

Հատկապէս մէկ քանի յոռետեսներու կարծիքին, ինքզինքնիս շատ երջանիկ կը համարեն հրապարակաւ յայտարարելու թէ «Կատակ» իր կարծ կեանքի մէջ վերաբուժական խիստ փորձ մը կատարելով, Հայ ժողովրդի բարոյական կենդանեցութիւնը հաստատող իրեն առ «Կատակ» ցոյց տուած գնահատելի համակրութեամբը, որը եղաւ մեզ թանկագին քաջալերութիւն զ«Տաւրոս» հրատարակելու ու շարունակելու հոնքան, ընդ որ քիսեցինք քաջել արդէն մեր պզտիկ թէրթըվ: Հետեւաբար «Տաւրոս» «Կատակ»ի ուղղութիւնը պիտի ունենայ մեծ ծաւալով, չարաթիւ 2 անգամ հրատարակելի: Պիտի պարունակէ ի մէջ այլոց քաղաքական տեսութիւններ, հեռագրաւորներ եւ ընդարձակ թղթակցութիւններ, որոց համար կ'մտադրութիւնը բնաւ ջանք չպիտի խնայէ, ի հարկին աւելցնելով նաեւ իր խմբագրական ուժերն: Պուլկարաբնակ աղջւնիոց պէտքն ի նկատի առնելով, մէկ մասը պիտի ըլլայ տոճկերէն:

Տպագրական լինչ լինչ կարգադրութեանց պատճառաւ «Տաւրոս»ի հրատարակութիւնը հարկադրուած ենք յետաձգել յառաջիկայ սեպտեմբեր ամսուան:

Բաժնորդագիրն է Պուլկարիոյ համար տարեկան 10, իսկ արտասահմանի 12 ֆր. կանխիկ:

Հասցէ: — Յ. ՉԱԿԵՐԻԱՆ, Տնօրէն-խմբագիր «ՏԱՐՈՍ» ի, Վ.Ս.Ն.Ս.:

H. TCHAKERIAN, Rédacteur du Journal «DAVROS». VARNA (Bulgarie).

